ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"_21" մայիսի 2012թ. № 32-Ա

ԱԳԱՊԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ/ և դ/ կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից ս/թ ապրիլի 6-ից մինչև մայիսի 5-ը «Ծավի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի զեկուցագրի,**կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ծավի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ագապի Վարդանյանին հայտարարել նկատողություն՝ կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետ, ՀՀ Սյունիքի մարզի «Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքը և մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի զեկուցագիրը:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. մայիսի 21
ք. Կապան